Շուշանիկ Կուրղինյան

Նամակ Աղասի Շահինյանին 1

22 փետրվարի, 1915 թ .
Խարկով
Սիրելի Աղասի.

Վաղուց է, որ ոչինչ գրած չեմ, թեև գիտեի, թե ինչ հոգեկան ապրումների ենթարկված էիր դու: Շավարշը բավականին լուրջ հիվանդացավ: Նախկին բժիշկը, որի մոտ նա բժշկվում էր, բանից դուրս է գալիս, որ ունքը շինելու փոխարեն աչքն է հանել՝ տխմարաբար բարդել ստամոքսի հիվանդությունը: Այժմ գնում է Մելիք-Ադամյանի մոտ, տեսնենք ինչ կլինի:

Ի՞նչ ես շինում այդտեղ . հեռացիր, փախիր, կխեղդվես: Երևակայում եմ, որքան ջանք ուկորով է հարկավոր հաշտ, համերաշխ լինելու քեզ շրջապատող արարածների հետ:

Ամառը մտադիր ե՞ս մի տեղ գնալու, թե ոչ՝ գրիր ինձ: Շավարշը սաստիկ ցանկություն ունի գալ այստեղ, հատկապես քեզ հետ թափառելու, կազդուրվելու, մայիսի վերջին ուզում է գալ, որ գնանք Անի, Էջմիածին, այլուր ու ապա Թիֆլիս, Անապա ու տուն:

Ամեն օր խոսում, ծրագիր է կազմում, հիրավի, լավ բան կլիներ, եթե ազատ լինես, ավելորդ ծախսերդ ես կհոգամ: Բացի քեզանից, մեկը չունեմ, որ հավատամ նրան, այսինքն, նա ինքն էլ միայն քեզ հետ լինել է ցանկանում . կմտածես ու կգրես ինձ:

Բարևիր բոլորին էլ, ում որ պատահես, իսկ եթե մոռանաս բարեբախտաբար ու չբարևես իմ կողմից՝ վելի լավ արած կլինես:

Ու՞ր գնացին կամ թե որտեղ են ընկերդ Մկոն ու կինը, մի ամբողջ ամիս դու ինձ լավ պատժեցիր . այ քեզ ինտելիգենտ կին, չէ հոգեպես . միմիայն ռուսն է ուժեղ իր ուժեղ կանանցով, հոգով արի, հոգով ուժեղ, ավելի քան ուժեղ: Հենց այդ պատճառով էլ հուսատու և խորացող է Ռուսաստանի ապագան, իսկ մեր կանայք, ի՞նչ են դրանք, մի մի դատարկ պարկ, աննյութ, անպարունակ, լսեցի՛իր, երևի, թե այդտեղից ովքեր ինձ հետ էին եկել . Աղասի, չէ թե կանգնած, այլ մի քանի տարով էլ ետ են գնացել. առաջ քայլելու ո՛չ ձիրք, ո՛չ ձգտում, ո՛չ ուժ, սա ի՞նչ այլանդակ պակասություն է ու մինչև ե՞րբ այդպես:

Դեհ ցգրություն, պատասխանիր.

Քո Շուշանիկ